ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ 2022-23 ՈՒՍՏԱՐՎԱ ԵՎ 2023Թ.-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ – ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2023թ. նոյեմբեր)

Թիվ	ՌԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ	**Ակնկալվող վերջնարդյունքները և ցուցիչները**	**Իրականացված աշխատանքները և ձեռք բերված արդյունքները**	**Չիրականացված աշխատանքները և դրանց պատճառները**	ՆՇՈՒՄ-ՆԵՐ
1.	Մասնաճյուղի գործունեության արդյունքային ցուցանիշների /ԳԱՑ 2018-23/ համալրում և վերլուծություն, հաշվետվության կազմում:	***ԱԱ.*** ԵՊՀ ԻՄ ՌԾ-ով նախատեսված արդյունքների ձեռքբերման գնահատում, բացթողումների և խնդիրների վերհանում: – Վերանայված ԳԱՑ, – Համալրված, վերլուծված և տպագրված ԳԱՑ 2018-2023 – Բարելավված և չբարելավված ցուցանիշների ցանկ՝ վերլուծություններով:	1. Պարոն Մակարյանի առաջարկությամբ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները վերանվանվել են **գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ)** **<u>2022թ.-ի սեպտեմբերին</u>** վերանայվել են ԳԱՑ-ի ցուցանիշներն ըստ Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման նոր ռազմավարական ծրագրի պահանջների, որում կարևորվել են կրթությունը, գիտությունն ու նորարարությունը և հանրային ներգրավումը: Վերանայվել և նոր արդյունքներով համալրվել են բոլոր 6 ոլորտները, որոնց ցուցանիշներում ավելացվել են **4** նոր **ցուցանիշներ** (4.11, 6.1.1, 6.1.2, 6.5) և ավելացվել են **35 նոր արդյունքներ**: ԳԱՑ-ում ավելացվել են նաև **<u>2 նոր ոլորտներ</u>**. որակի կառավարում, հասարակական պատասխանատվություն՝ **6 ցուցանիշներով** և **24 արդյունքներով**: Վերանայված ԳԱՑ-ը քննարկվել է ԳԽ կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովում (ՈԿՄՀ-31.10.2022Թ.): Ըստ ժամանակացույցի ստորաբաժանումներից հավաքագրվել են տվյալները և ցուցանիշներում ներառված արդյունքների վերաբերյալ նրանց վերլուծությունները: Հավաքագրված ցուցանիշների հիման վրա համալրվել, խմբագրվել և կազմվել է ԳԱՑ 2017-22-ը: 3. ԳԱՑ 2017-22-ի ցուցանիշների հիման վրա կազմվել է 2021-22 ուստարվա Մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հաշվետվություն, որում ներկայացված են Մասնաճյուղի ձեռք բերած **հիմնական դրական արդյունքները և խնդիրներն ու բացթողումները:** 4. Վերանայված և արդյունքներով համալրված ԳԱՑ 2017-22 –ը ներկայացվել է ԳԽ հաստատմանը **/ԳԽ 24.12.2022թ./:** 5. **<u>2023թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր</u>** ամիսներին ստորաբաժանումներից հավաքագրվել են տվյալները և ցուցանիշներում ներառված արդյունքների վերաբերյալ նրանց վերլուծությունները: Հավաքագրված ցուցանիշների հիման վրա		

			համալրվել, խմբագրվել և կազմվել է ԳԱՑ 2018-23-ը, որը ներկայացվել է ԳԽ հաստատման:		
2.	**Կ2.4.** Պարբերաբար իրականացնել ուսանողների կրթական կարիքների գնահատում: **Գ/պ-** ՄԿՈԱԲ/վ ԿԲԴՎԲ/վ	***ԱԱ.*** Կրթական և այլ մատուցվող ծառայություններից բավարարված ուսանողներ – Ուսանողների կրթական կարիքների գնահատման հաստատված մեթոդաբանություն: – Վերանայված կամ մշակված կարգեր և հետազոտության գործիքի անձնագրեր – Ուսանողների վերհանված կրթական կարիքների և դրանց լուծումների վերաբերյալ ամենամյա զեկուցումներ:	**1.** Բաժինն իր գործառույթների շրջանակում պարբերաբար տարբեր մեխանիզմներով վեր է հանում մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների կարիքներն ու խնդիրները, դրանք ներկայացնում է տնօրենության նիստերում, ապա մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցությամբ մշակվում են այդ խնդիրների լուծման ծրագրեր: Այդ գործընթացը կանոնակարգելու և նշված գործողության իրականացման շրջանակներում ՄԿՈԱ բաժինը մշակել է **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման և գնահատման կարգ**», որի նախագիծը քննարկվել է ԳԽ-ին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովում **(ՈԿՄՀ, 31.10.2023թ.)** և ներկայացվել է ԳԽ հաստատման: Կարգը սահմանում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ռազմավարական նպատակների իրականացման համար շահակիցների գիտակրթական, սոցիալական կարիքների վերհանման **<u>մեթոդաբանությունը</u>** և մեխանիզմները, կարիքների ուսումնասիրության քայլերը, դրանց գնահատման և հավաքագրված տվյալների վերլուծության մեթոդները, վերհանված կարիքների վերլուծության արդյունքների օգտագործման հնարավորությունները: Կարգում մանրամասն նշված են շահակիցների կարիքների վեր հանման մասնաճյուղում կիրառելի մեխանիզմները, որոնք ներառում են թե հարցումներ, թե հանդիպում-քննարկումներ, թե ուսումնական և կազմակերպչական այլ գործընթացներ: Առանձին շահակիցների համար՝ ուսանողներ, շրջանավարտներ, դասախոսներ, աշխատակիցներ, գործատուներ, ներկայացված են նրանց կարիքների գնահատման ցուցիչները: Վեր հանված կարիքների վերլուծության արդյունքներն օգտագործվելու են Մասնաճյուղի ռազմավարական նոր ծրագրի մշակման, մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և վերանայման, ուսումնական, կրթական, գիտական և հասարակական գործունեության բարելավման և նյութատեխնիկական բազայի բարելավման համար: **2.** Նոր ՌԾ-ի պահանջներին համահունչ վերանայվել են հետազոտության **<u>գործիքի 5 անձնագրեր</u>** (հետազոտական աշխատանքի իրականացումից և գնահատումից ուսանողների	Վերանայվել են իրականացվող հարցումներին վերաբերող կարգերը	Կարգը ներկայացվել է ԳԽ հաստատման՝ 2023թ. նոյեմբեր

			բավարարվածության ուսումնասիրության, հետազոտական աշխատանքի իրականացումից և գնահատումից դասախոսներ բավարարվածության ուսումնասիրության, Մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրության, Մասնաճյուղից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության, Մասնաճյուղից դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի բավարարվածության ուսումնասիրության, հիմք՝ բաժնի 28.10.22թ. արձ.)։ **3.** Բաժինը **2021, 2022 թվականներին** տարբեր մեխանիզմներով վեր է հանել ուսանողների և դասախոսների մի շարք **<u>խնդիրներ և կարիքներ</u>**։ **2022թ.-ի հոկտեմբերին** տնօրենության նիստում բաժինը ներկայացրել է վերհանված կարիքների և խնդիրների փաթեթը։ Նշված խնդիրների համար հնարավոր լուծումներ գտնելու համար բաժինն այդ խնդիրները տրոհել և խմբավորվել է ըստ պատասխանատվության և ուղարկել է բոլոր ստորաբաժանումներին։ Ստորաբաժանումները կազմել են հասցեագրված **<u>խնդիրների լուծման իրենց ծրագրերը</u>**, որոնք ներառում են այդ խնդիրների լուծման համար իրենց քայլերը, ակնկալիքները և ժամկետները։ **2023թ.-ի ապրիլին** այդ ծրագրերի իրականացման արդյունքները բաժինը ամփոփել է տնօրենության նիստում **/Տն. նիստ, 13.04.23թ./**։ **4. 2023թ.-ի հունվարից նոյեմբեր** ամիսներին տարբեր մեխանիզմներով իրականացվել են … ուսումնասիրություններ, կատարվել են հավաքագրված տվյալների վերլուծություններ, որոնց մի մասը նաև հրապարակվել է. • **2023թ. փետրվարին** կազմակերպվել է 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի <u>«Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության»</u> ուսումնասիրություն առցանց հարցման միջոցով, որի արդյունքները քննարկվելուց և ամփոփվելուց հետո ներկայացվել են ԳԽ-ում /ԳԽ, 29.04.23թ./ և հրապարակվել են **2023թ. ապրիլին։** • **2023թ.-ի հունիսին** կազմակերպվել է «Պրոֆեսորադասախոսական կազմի Մասնաճյուղից բավարարվածության» առցանց հարցումը։ Հարցման արդյունքներից դուրս են գրվել խնդիրներն ու կարիքները։ • **2023թ.-ի մայիսին և հունիսին** բաժինը կազմակերպել է հանդիպում-քննարկումներ մասնաճյուղի շրջանավարտների հետ և իրականացրել է <u>«Մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության»</u> առցանց հարցումներ առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների շրջանում։ Առկա		

			ուսուցման շրջանավարտների հարցման արդյունքները վեր են լուծվել, ներկայացվել են Մասնաճյուղի ԳԽ-ում **/ԳԽ, 08.07.23թ./,** հրապարակվել են կայքում: Բաժինն իրականացրել է նաև մանրամասն վերլուծություն ըստ կրթական ծրագրերի, արդյունքներն ուղարկվել են ֆակուլտետներ և համապատասխան ամբիոններ: • **2023թ.-ի մայիսին** բաժինը կազմակերպել է հանդիպում-քննարկումներ 2022-23 ուստարվա 2 կիսամյակներում պրակտիկա անցած բոլոր կրթական ծրագրերի ուսանողների հետ, քննարկել է պրակտիկայի կազմակերպման և իրականացման հետ կապված հարցեր, պարզել են պրակտիկայի հետ կապված խնդիրները, հարցաշարի միջոցով պարզել են պրակտիկայի կազմակերպումից և իրականացումից ուսանողների բավարարվածությունը: Հանդիպման արդյունքների և հարցման արդյունքների հիման վրա կազմվել է հաշվետվություն: • **2023թ.-ի ապրիլ մայիս ամիսներին** բաժինը հանդիպում է ունեցել գրեթե բոլոր կրթական ծրագրերի 1-ին կուրսի ուսանողների հետ և քննարկել գնահատման բազմագործոն համակարգի, մասնավորապես ինքնուրույն աշխատանքների իրականացման հետ կապված խնդիրները: Արդյունքները ամփոփվել են և վեր են լուծվել, այստեղից նույնպես դուրս են գրվել խնդիրները և կարիքները: • **2023թ.-ի հուլիսին** բաժինը տնօրենության հերթական նիստում /15.07.23թ./ ներկայացրել է ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից 2022-23 ուստարվա շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրության հարցման արդյունքներից <u>վեր հանված խնդիրները</u>: • **2023թ. սեպտեմբերին** կազմակերպել է 2022-23 ուստարվա 2-րդ կիսամյակի «Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության» ուսումնասիրություն առցանց հարցման միջոցով, որի արդյունքները մշակման փուլում են, դրանցից նախապես դուրս են գրվել խնդիրները և կարիքները: • **2023թ.-ի սեպտեմբերին** կազմակերպվել է Մասնաճյուղից վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի բավարարվածության վերաբերյալ առցանց հարցում, արդյունքները վեր են լուծվել, դուրս են գրվել խնդիրները և կարիքները: • **2023թ.-ի սեպտեմբերին** ուսումնամեթոդական վարչության և ամբիոնների հետ համագործակցությամբ տարբեր մեխանիզմներով (շուրջ 11 տարբեր ուսումնասիրություններ. հարցումներ,		

			հանդիպում քննարկումներ) բաժինը վեր է հանել դասախոսների, ուսանողների, աշխատակիցների և արտաքին շահակիցների տասնյակ խնդիրներ և կարիքներ: Վեր հանված խնդիրների փաթեթը ներկայացվել է **2023թ.-ի հոկտեմբերի** հերթական տնօրենության նիստում **/Տն.նիստ, 27.10.23թ./:** Խնդիրներն առանձնացվել են ըստ պատասխանատվության և լուծումներ ստանալու տրամաբանությամբ ուղարկվել են (ընթացքի մեջ է) պատասխատու ստորաբաժանումներին: • **2023թ.-ի նոյեմբերին** բաժինը ԿԲԴՎ բաժնի և ուսումնամեթոդական վարչության հետ համագործակցությամբ, նրանց տրամադրած տվյալների հիման վրա իրականացրել է վերապատրաստում անցած երիտասարդ դասախոսների դասավանդման որակից ու արդյունավետությունից ուսանողների բավարարվածության վերլուծություն: Վերջին 3 տարիներին վերապատրաստում անցած բոլոր դասախոսների շրջանում իրականացվում է հարցում՝ գնահատելու համար վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը և այդ դասընթացների որակից նրանց բավարարվածությունը: Արդյունքները մշակվում են: Վերջին 3 տարիների ընթացքում հավաքագրված խնդիրների հիման վրա բաժինը կատարելու է համեմատական վերլուծություն, ինչը հնարավորություն կտա պարզաբանել, թե որքանով են խնդիրների լուծումներին ուղղված ծրագրերը եղել լավը և արդյունավետ, ապա կկազմի դրա վերաբերյալ **<u>զեկույց</u>:**		
3.	**Կ2.5.** Պարբերաբար իրականացնել աշխա-տաշուկայի պահան-ջարկի գնահատում՝ կրթական ծրագրերի բարելավման և նոր կրթական ծրագրերի ներդրման համար: **Գ/պ -**ՄԿՈԱԲ/վ	***ԱԱ.*** Աշխատաշուկայում մրցունակ և պահանջված շրջանա-վարտներ: – Աշխատաշուկայի պահանջարկի գնահատման նոր մեխա-նիզմներ – Աշխատաշուկայի պահանջարկի գնահատման ամենամյա զեկույցներ	1. **2022թ.-ի օգոստոս սեպտեմբեր ամիսներին** բաժինն իրականացրել է ՀՀ-ի, ՌՖ-ի, աշխարհի և Տավուշի մարզի աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն, մասնավորապես ուսումնասիրվել են նշված երկրների աշխատաշուկայում ամենապահանջված, ամենաբարձր վարձատրվող, ապագայի ամենապահանջված մասնագիտությունները: Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրության համար որպես գործիքներ օգտագործվել են վիճակագրական և վերլուծական տարբեր կայքեր և հրապարակումներ, օրինակ՝ **աշխատանքային ներգաղթյալների ուղեցույց BBC-ից, Career.ru, hh.ru, <u>staff.am,</u> Զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության կայք**: Դուրս են գրվել նշված երկրներում մինչև 2022թ.-ը և հետագայում ամենապահանջված մասնագիտությունների ցանկերը: Կազմվել է 2021թ.-ի Հայաստանյան աշխատաշուկայում		

			ամենապահանջված մասնագիտությունների ցանկը՝ թափուր տեղերի և աշխատավարձերի քանակով: Կազմվել է մասնաճյուղի կողմից հնարավոր իրականացվելիք (նաև լրացուցիչ կրթական ծրագրերի միջոցով) մասնագիտությունների ցանկը: Կազմվել է աշխատաշուկայի **<u>պահանջարկի գնահատման զեկույց</u>**, որը տեղադրվել է կայքում: 2. Բաժինը կազմել է 2022թ. մայիսի 1-ի դրությամբ Տավուշի մարզի աշխատաշուկայի իրավիճակի և Տավուշի մարզի տարածքային կենտրոններում աշխատանք փնտրողների ու գործազուրկների թվաքանակի վերաբերյալ տվյալների փաթեթ (2022թ.-ի հունվարի 1-ի դրությամբ): Բաժինը ուսումնասիրության արդյունքների հիման վրա կներկայացնի գործող կրթական ծրագրերի վերանայման կամ նոր կրթական ծրագրերի իրականացման հնարավորության առաջարկներ: 3. **2022թ.-ի հոկտեմբերին** փոխտնօրենի առաջարկով բաժինն առցանց հարցման միջոցով կազմակերպել է հասարակական կարծիքի ուսումնասիրություն հեռակա ուսուցմամբ «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում» և «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական ծրագրերից մեկի ներդրման համար: Հարցման արդյունքների վերլուծության արդյունքում Մասնաճյուղը որոշում է կայացրել ներդնել «Գործարար վարչարարություն (կառավարում)» հեռակա ուսուցմամբ **<u>մագիստրոսական ծրագիրը</u>**, որի իրականացման համար Մասնաճյուղը 2022-23 ուստարվա ընթացքում ձեռք է բերել լիցենզիա, և 2023թ.-ի հոկտեմբերին կազմկերպել է այդ ծրագրով առաջին ընդունելությունը: Բաժինը բավականաչափ տվյալներ է հավաքագրել ՀՀայաստանում աշխատակաշուկայի պահանջարկի վերաբերյալ 2022թ.-ի և ապագայի վերաբերյալ: **<u>Մշակվել են</u>** աշխատաշուկայի պահանջարկի գնահատման մեխանիզմներ, փաստաթուղթը խմբագրման փուլում է:		
4.	**Կ2.11.** Նախապատրաստել Մասնաճյուղի կրթական ծրագրերը հավատարմագրման: **Գ/պ**- ԿԲԴՎԲ/վ				

5.	**1.4.4.** Ակտիվացնել «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման» կենտրոնի աշխատանքները՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողություններն ու հմտություններն արդիականացնելու և զարգացնելու նպատակով: **Գ/պ**-ԿԲԴՎԲ/վ	***ԱԱ.*** Ձեռք բերած մանկավարժական կարողություններից և հմտություններից երիտասարդ դասախոսների բավարարվածության աճ: Վերապատրաստումների արդյունավետության և որակի գնահատման գործող ընթացակարգ:	Այս ուղղությամբ բաժինը ոչինչ չի արել:		
6.	**Կ4.7.** Բազմազանեցնել ԵՊՀ ԻՄ-ի աշխատողների մասնագիտական աճի աջակցման և խրախուսման ձևերը, ներդնել մասնագիտական և անձնային աճի համակարգ: **Գ/պ**-ԿԲԴՎԲ/վ	**ԱԱ.** Առաջավոր փորձի տարածում: – Իրականացված դասալսումների արդյունավետության աճ	Բաժինն ուսումնասիրել է Հայաստանյան մի քանի բուհերում դասալսումների իրականացման կարգերը և արդյունքների գրանցման և վերլուծության ձևաչափերը: Դուրս է գրել դասալսման գնահատման նրանց տարբերվող մոտեցումները: Դասալսման արդյունավետության բարձրացման համար բաժինը **<u>մշակել է</u>** **<u>նոր հարցաշար</u>**, որում հստակեցվել են դասալսման նպատակներին կողմնորոշված գնահատման չափանիշները, և դրանց քանակն էապես քիչ է: Մշակել է դասալսման **<u>արդյունքների վերլուծության ձևաչափ</u>**: Այս ձևաչափը և հարցաշարը **2022թ.-ի նոյեմբերին** քննարկվել են ամբիոններում, վերանայվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասալսումների անցկացման գործող կարգը (Հաստատված 17.10.2014, ԳԽ), քննարկվել է Որակի կառավարման մշտական հանձնաժողովում (ՈԿՄՀ, 31.03.2023թ.), լրացումներով կարգը հաստատվել է **ԳԽ-ում (29.04.2023թ.):** Բաժինը **2023թ.-ի հոկտեմբերին** մասնակցել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի դասախոսի պաշտոնի անձնագրի վերանայման աշխատանքներին, մշակել է նաև ըստ պաշտոնի անձնագրում ներկայացված պահանջների **դասախոսի գնահատման թերթիկի ձևաչափ**:		կարգը հաստատվել է՝ ԳԽ 29. 04. 2023թ.

7.	**Կ4.8.** Ներդնել դասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի աշխատանքի արդյունավետության գնահատման նոր համակարգ: **Գ/պ ՄԿՈԱԲ/վ**	**Ա/Ա**-Մասնագիտա-կան բարձր կարողու-թյուններ ունեցող աշխատակազմ:			
8.	**Կ5.5.** Ամրապնդել ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ-ի ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը՝ պարբերաբար իրականացնելով աշխատակազմի վերապատրաստումներ, փորձի փոխանակում: **Գ/պ**-ՈԻՄՎ/պ ԿԲԴՎԲ/վ ՄԿՈԱԲ/վ		**<u>Մասնակցել է</u>** մասնաճյուղի գործունեության կանոնակարգման գործընթացի շրջանակներում բազմաթիվ փաստաթղթերի մշակման և խմբագրման աշխատանքներին:		
9.	**Կ6.2.** Գործադրել հետադարձ կապի և դրա արդյունքների կիրառման բարելավված մեխանիզմներ: **Գ/պ-**ՄԿՈԱԲ/վ	**ԱԱ.** Բարելավված հետադարձ կապ: – Հետադարձ կապի գործող մեխանիզմների վերաբերյալ կատարված ուսումնասիրություններ , – Ստորաբաժանումների գործունեության արդյունավետության աճ:	**Ուսումնասիրվել են** մասնաճյուղում գործող հետադարձ կապի մեխանիզմները, բաժինը մշակել է հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության բարելավման և նոր մեխանիզմների ներդրման **<u>առաջարկներ</u>**: Փաստաթուղթը խմբագրման փուլում է, ներկայացվել է ՈԿՄՀ-ի քննարկմանը: Ըստ ուսումնասիրությունների արդյունքների ստորաբաժանումների գործունեությունից բավարարվածության **միջ. գնահատականը ...է**, որը բարելավվել է նախորդ արդյունքների համեմատ:		

10.	**Կ6.3.** Գործադրել ուսումնական ստորաբաժանումների գործունեության պլանավորման, իրականացման, մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ: **Գ/պ ՈՒՄՎ/պ**	**ԱԱ**-Ներդրված ՊԻԳԲ (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում) շրջափուլ՝ ստորաբաժանումների գործունեության արդյունա-վետ կառավարումն ապահովող գործիքակազմերով:	Աուդիտի գործընթացների հստակ կազմակերպման, ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման, նրանց գործունեությանն աջակցելու և կանոնակարգելու համար բոլոր ստորաբաժանումների համար **կազմվել են** անհրաժեշտ փաստաթղթերի ցանկեր:	**<u>Չեն մշակվել</u>** ստորաբա-ժանումների գործունե-ության արդյունավե-տության գնահատման բարելավման մեխանիզմներ :	
11.	**Կ6.7.** Բարձրացնել աշխատողների և ուսանողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը համալսարանի կառավարման համակարգում: **Գ/պ- Տնօրեն**	**ԱԱ**-Ներդրված ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլ՝ ուսումնական ստորաբաժանումների և դասախոսական կազմի գործունեության արդյունավետ կառավարումն ապահովող գործիքակազմերով, որն ընդունելի է շահակիցների համար և ապահովում է մասնակցային կառավարում:			
12.	**Գ1.1.** Մշակել և իրականացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձրացմանը միտված քաղաքականություն: **Գ/պ-** Գիտ.քարտուղար	**ԱԱ.** Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի աճ: – Բենչմարքինգի արդյունքների վերլուծություն, – Ներդնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի	Իրականացվել է այլ բուհերում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի պահանջների ուսումնասիրություն և բենչմարքինգ, վերլուծվել է բենչմարքինգի արդյունքները և մշակվել է մասնաճյուղում ավարտական աշխատանքների գիտական մակարդակի բարձրացման առաջարկներ, փաստաթուղթը **ներկայացվել է ԳԽ-ին կից ՈԿՄՀ քննարկման**:	**<u>Չի մշակվել</u>** ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձրացմանը միտված քաղաքականություն:	Բենչմարքինգի զեկույցը՝ դեկտեմբերին քաղաքականությունը՝ 2023թ.-ի փետրվար

		բարձրացմանը միտված գործող քաղաքականություն:			
13.	**Հ1.1.**Ապահովել կայուն համագործակցություն լրացուցիչ կրթական ծրագրերի տարբեր շահակիցների հետ: **Գ/պ-** ՈՒՄՎ/պ **Հ1.2.** Մշակել և ներդնել աշխատանքին կողմնորոշված լրացուցիչ կրթական ծրագրեր: **Գ/պ-**ՈՒՄՎ/պ **Հ3.1.** Բացահայտել և գնահատել շահակիցների լրացուցիչ կրթական կարիքները: **Գ/պ-** ՈՒՄՎ/պ	**ԱԱ.** Լրացուցիչ կրթական ծրագրերի շահակիցների հետ կայուն համագործակցություն: – Մասնաճյուղի հետ լրացուցիչ կրթական ծրագրերի տարբեր շահակիցների հետ համագործակցության առաջարկների հաստատված փաթեթ, – Համագործակցության հաստատված պայմանագրեր, – Ոչ ֆորմալ կրթական ծրագրեր իրականացնելու Մասնաճյուղի հաստատված քաղաքականություն, – Շահակիցների վերհանված լրացուցիչ կրթական կարիքների հաշվառման տվյալների բազայի առկայություն,	Բաժինը **2022թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր** ամիսներին ուսումնասիրել է այլ բուհերում լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման մոտեցումները, շահակիցների առաջարկները և պահանջները լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման համար: **<u>Մշակել է</u> «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման կարգը»**, որը ամբիոններում և ԳԽ-ին կից ՈԿՄՀ-ում քննարկվելուց հետո **հաստատվել է ԳԽ-ում (29.04.2023թ.):** Մշակվել է նաև շահակիցներին լրացուցիչ կրթական ծառայության մատուցման պայմանագրի ձևաչափը: Բաժինն ուսումնասիրելով ՀՀ-ում և Տավուշի մարզում պահանջված մասնագիտությունները և շահակիցների կարիքները **<u>կազմել է</u>** նաև այն մասնագիտությունների ցանկը, որոնք լրացուցիչ կրթության մատուցման շրջանակներում նախընտրելի են մասնաճյուղի կողմից: ցանկն ուղարկվել է ամբիոններ ուսումնասիրման և առաջարկների համար, պայմանագիրն ուղարկվել է իրավախորհրդատուին:	• Առայժմ լրացուցիչ կրթական ծրագրեր **<u>չեն իրականացվում</u>**, • **<u>չեն մշակվել</u>** լրացուցիչ կրթության արդյունավետության և որակի գնահատման ցուցիչներ: • Համագործակցության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն	
14.	**Հ2.1.** ԵՊՀ ԻՄ-ի տարբեր ստորաբաժանումների ներգրավմամբ ձևավորել ձեռնարկությունների հետ համագործակցության ընդհանուր համակարգ: **Գ/պ-** ՊԿՇՀԲ/վ	**ԱԱ.** Համագործակցության գործող արդյունավետ մեխանիզմներ: – Ձեռնարկությունների հետ համագործակցության հաստատված կարգ,	Տարածաշրջանի ձեռնարկությունների հետ համագործակցության իրականացման և ակտիվացման, ուսանողների մասնագիտական և բիզնես կարողությունների զարգացմանն աջակցելու և այդ գործընթացները կանոնակարգելու համար բաժինը մշակել է **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և պետական ու ոչ պետական կառույցների ու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման կարգ»:** Կարգը քննարկվել է ԳԽ-ին կից ՈԿՄՀ-ում **/31.10.23թ./** և **ներկայացվել է ԳԽ-ում հաստատման**: Կարգը սահմանում է Մասնաճյուղի հետ ՀՀ-ում և մասնավորապես	«Շրջանավարտների միություն» **<u>չի ստեղծվել</u>**	

			Տավուշի մարզում ակտիվ գործունեություն ծավալող պետական, մասնավոր և միջազգային ընկերությունների ու կազմակերպությունների (Ձեռնարկությունների) կայուն համագործակցության համակարգ ստեղծելու, Մասնաճյուղի ուսանողների ապագա կարիերայի զարգացմանն ու նրանց մասնագիտական գործունեությանն աջակցելու ձևերն ու մեխանիզմները, ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող հանձնաժողովի աշխատակարգը: Կարգով համագործակցության մեջ էական տեղ է հատկացվում մասնաճյուղի շրջանավարտներին: Առաջարկվում է ստեղծել «Շրջանավարտների միություն» ձեռնարկությունների հետ համագործակցության ընդլայման, աշխատանքների հասցեականության բարձրացման համար:		
15.	**Հ2.2** .Իրականացնել ԵՊՀ ԻՄ-ի՝ վերջին 5 տարի-ների շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրություն: **Գ/պ-** ՊԿՇՀԲ/վ	**ԱԱ.** Շրջանավարտների զբաղվածության վերա-բերյալ պարբերաբար թարմացված տվյալներ: – ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտ-ների զբաղվածության և աշխատաշուկայի կարիք-ների մշտադիտարկման (մոնիթորինգի) ներդրված համակարգ,	Բաժինը **2022թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր** ամիսներին իրականացրել է մասնաճյուղի վերջին 5 տարիների (2018-2022) առկա և հեռակա շրջանավարտների զբաղվածության վերլուծություն: Ըստ կրթական ծրագրերի դուրս են գրվել աշխատող, մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների քանակները և կազմվել է ամփոփ տեղեկատվություն, տեղադրվել է կայքում: Գործողություն Կ2.5-ի շրջանակներում հավաքագրվել են տվյալներ Տավուշի մարզում գործազրկության վիճակի, աշխատաշուկայի կարիքների վերաբերյալ, դուրս է գրվել պահանջված մասնագիտությունների ցանկը: **Գործում է** շրջանավարտների զբաղվածության հաշվառման էլեկտրոնային բազա, որը պարբերաբար թարմացվում է, բազայում հավաքագրված տվյալների միջոցով աջակցում ենք մարզի գործատուներին համապատասխան որակավորում ունեցող կադրերի փնտրման գործընթացում:	**Չի մշակվել** շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների մշտադիտարկման համակարգ:	
16.	**Հ2.3.** Համակարգել ֆակուլտետային ամեն-ամյա էքսպոների և աշխատանքային տոնա-վաճառների կազմա-կերպման և իրականաց-ման գործընթացները: **Գ/պ**-Տնօրեն	**ԱԱ**- Էքսպոների և աշխատանքի տոնա-վաճառների համա-կարգված կազմակերպում	**Չի ստեղծվել** էքսպոների և աշխատանքի տոնավաճառների կազմակերպման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, բաժինը պետք է աջակցեր ֆակուլտետներին էքսպոների և աշխատանքի տոնավաճառների կազմակերպման գործընթացի պլանավորմանը, այս գործընթացները առայժմ **չեն իրականացվել:**		
17.	**Հ2.4**. Կազմակերպել և իրականացնել լրացու-	**ԱԱ.** Լրացուցիչ պրակտի-կաներում ներգրավված	Բաժինը **2023թ.-ի հունվար-մարտ** ամիսներին ուսումնասիրել է լրացուցիչ պրակտիկաների իրականացման այլ բուհերի փորձը,	Առայժմ մասնաճյուղում **չեն իրականացվում**	

	ցիչ պրակտիկաներ (ինտերնշիփ, մենթորշիփ և այլն): **Գ/պ-**ՈՒՄՎ/պ	ուսանողների թվի աճ: – Իրականացված լրացուցիչ պրակտիկաներ, Պրակտիկաներից ուսանողների բավարարվածության աճ:	մարզում դրանց իրականացման հնարավորությունները և մշակել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում լրացուցիչ պրակտիկաների իրականացման **աշխատակարգը,** որը ներկայացնում է լրացուցիչ պրակտիկաների նպատակն ու խնդիրները, դրանց իրականացման հնարավորություններն ու մեխանիզմները, կազմակերպման ձևերը և տեսակները: Աշխատակարգը ներկայացվել է ԳԽ-ին կից ՈԿՄՀ-ի քննարկմանը: Բաժինը **2023թ.-ի ապրիլ-մայիս** ամիսներին մշակել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում մենթորության իրականացման կարգ» և մենթորության կազմակերպման ուղեցույց: Փաստաթղթերը ներկայացվել են ԳԽ-ին կից ՈԿՄՀ-ում քննարկման:	լրացուցիչ պրակտիկաներ, հետևաբար ուսանողներ ներգրավված չեն:	
18.	**Հ3.3.** Խթանել նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառումը ոչ ֆորմալ կրթական ծրագրերի (նախաձեռնությունների) իրականացման գործընթացներում: **Գ/պ-**ԿԲԴՎԲ/վ	**ԱԱ.** Խրախուսված աշխատակիցներ: – Ոչ ֆորմալ կրթության իրականացման գործընթացում նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառման համար խրախուսման մշակված մեխանիզմներ,	**2023թ.-ի** հունվար մարտ ամիսներին **<u>մաշկվել են</u>** ոչ ֆորմալ կրթության իրականացման գործընթացում նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառման համար խրախուսման մեխանիզմներ: Փաստաթուղթը ներկայացվել է ԳԽ-ին կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովին:		
19.	**Հ4.2.** Ակտիվացնել համագործակցությունը տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ: **Գ/պ-** ՊԿՇՀԲ/վ	**ԱԱ.** Ըստ պլանի իրականացվող գործընթացներ: – Տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ իրականացված առնվազն 15 ծրագիր, – Մասնաճյուղի մասնակցություն մարզի հասարակության համար իրականացվող առնվազն 10 ծրագրում:	**Մշակվել է** տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ **փոխհամագործակցության ծրագրերի իրականացման պլան:** Փաստաթուղթը ներկայացվել է ԳԽ-ին կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովին՝ քննարկման:		

20.	**Հ4.3.** Բարելավել հանրությանը Մասնաճյուղի հաշվետվողականության համակարգը և նրա արդյունավետության գնահատման մեխանիզմները։ **Գ/պ-** ՊԿՇՀԲ/վ	**ԱԱ.** Հաշվետվողականության արդյունավետ գործող համակարգի առկայություն։ Հանրությանը Մասնաճյուղի հաշվետվողականությունն ապահովող համակարգի արդյունավետության գնահատման գործող մեխանիզմներ,	**<u>Չի մշակվել</u>** հանրությանը Մասնաճյուղի հաշվետվողականությունն ապահովող համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմներ, և չի իրականացվել հաշվետվողականությունից հանրության բավարարվածության ուսումնասիրություն		
21.	**Հ4.4.**Բարելավել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները։ **Գ/պ-** ՊԿՇՀԲ/վ	**ԱԱ.** – Գործող կապի մեխանիզմների վերլուծության զեկույց, – Գործող կապի մեխանիզմների արդյունավետության գնահատման և բարելավման առաջարկների զեկույց, Հասարակության հետ հետադարձ կապի ապահովման գործող մեխանիզմներ։	**<u>Չի կատարվել</u>** հասարակության հետ Մասնաճյուղի հետադարձ կապի գործող մեխանիզմների ուսումնասիրություն և դրանց արդյունավետության գնահատում, հետևաբար նաև չեն ներկայացվել դրանց բարելավման առաջարկներ		
22.	**Հ5.1.** Մշակել Մասնաճյուղի միջազգայնացման քաղաքականություն՝ ապահովելով շահակիցների ներգրավվածությունը։ **Գ/պ-**Տնօրեն	**ԱԱ.** Վերապատրաստումներից բավարարված միջազգայնացման համար պատասխանատու աշխատակիցներ։ Վերապատրաստումներից բավարարված միջազգայնացման համար պատասխանատու աշխատակիցներ։	**<u>Չի մշակվել</u>** Մասնաճյուղի միջազգայնացման քաղաքականություն		

23.	**Հ5.4.** Մշակել ԵՊՀ ԻՄ-ի PR և մարքեթինգային հաղորդակցության ռազմավարություն և երկարաժամկետ ու կարճաժամկետ գործողությունների ծրագիր: **Գ/պ**- Փոխտնօրեն, ՏՀՍԶԲ/վ, ՈՒՄՎ/պ		Բաժինը պետք է աջակցեր PR և մարքեթինգային հաղորդակցության ռազմավարության մշակմանը, պատասխանատու ստորաբաժանումների կողմից առաջարկներ չեն եղել, **բաժինը ինքը նախաձեռնություն չի ցուցաբերել:**		
24.	**3.5.5.** Պարբերաբար իրականացնել ԵՊՀ ԻՄ-ի միջազգայնացման բենչմարքինգ և տարեկան գործողությունների պլանավորում: **Գ/պ-** ՄԿՈԱԲ/վ	**ԱԱ.** Միջազգային և հանրապետական ուսումնական գործընթացներում Մասնաճյուղի ներգրավվածության բարձր ցուցանիշ: – Միջազգայնացման բենչմարքինգի իրականացման հաստատված ընթացակարգ,	Բաժինը **չի իրականացրել** ԵՊՀ ԻՄ-ի միջազգայնացման բենչմարքինգի հետ կապված համապատասխան գործընթացներ:		

Բաժինն իրականացրել է նաև հետևյալ աշխատանքները.

1. 2023թ.-ի հունվարին **համակարգել և մասնակցել է** Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման 2023թ.-ի հունվար-օգոստոս գործողությունների պլանի մշակման աշխատանքներին:
2. 2023թ.-ի հունվարին կատարել է Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2022թ.-ի ապրիլ-դեկտեմբեր ժամանակահատվածի Մասնաճյուղի կատարողականի վերլուծություն և կազմել է զեկույց:
3. 2023թ.-ի օգոստոսին **համակարգել և մասնակցել է** Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման 2023թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր գործողությունների պլանի մշակման աշխատանքներին:
4. 2023թ.-ի սեպտեմբերին **համակարգել է** ըստ մշակված գործողությունների պլանի մասնաճյուղի ստորաբաժանումների 2023թ-ի սեպտեմբեր-դեկտեմբեր գործունեության աշխատանքային պլանների կազմման և հաստատման գործընթացը:

5. Մասնակցել է ԵՊՀ ԻՄ-ի կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2022-2026թթ. համալիր միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքներին, որը քննարկվել է ԳԽ-ին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովում (31.10.2022թ.) և վերանայվելուց հետո հաստատվել է ԳԽ-ում (08.07.2023թ.):
6. 2022թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ըստ ստորաբաժանումների հաշվետվությունների կազմել է Մասնաճյուղի 2021-22 ուստարվա գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:
7. Բոլոր ստորաբաժանումներում իրականացրել է անհրաժեշտ խորհրդատվություն՝ աջակցելով նրանց գործունեության պլանավորմանը և բարելավմանը, կատարողականի վերլուծությանը: Մասնավորապես, ամբիոններում հետևողական է դասընթացների փաթեթների առկայությանը և անհրաժեշտության դեպքում իրականացնում է դրանց կազմելու վերաբերյալ խորհրդատվություն:
8. Մշտապես համակարգում է ստորաբաժանումների գործողությունների պլանների և աշխատանքային պլանների մշակման և հաստատման գործընթացները:

2022թ.-ի հուվար-փետրվար ամիսներին **մշակել է** ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման ընթացակարգը, որը ներառում է հետևյալ 5 փաստաթղթերը.

- ✓ Մասնաճյուղի ՌԾ-ի կատարողականի գնահատման մեթոդաբանությունը,
- ✓ ՌԾ-ի արդյունքների և գործունեության կատարողականի գնահատման մեթոդները,
- ✓ Գործունեության առանցքային ցուցանիշների վերանայման մոտեցումները,
- ✓ Ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցի վերանայման մեխանիզմները,
- ✓ ՌԾ-ի նպատակների իրականացման արդյունավետության գնահատում:

Փաստաթուղթը քննարկման փուլում է:

Ըստ ՌԾ-ի 3 նպատակների առաջընթացի գնահատման ցուցիչների **պատրաստել է** հատուկ ձևաչափեր, որոնց միջոցով գրանցվելու են մասնաճյուղի ձեռքբերումները ՌԾ-ի իրականացման ժամանակահատվածում (ՌԾ-ի կատարողականի գնահատման քանակական և որակական ցուցիչների համար առաջընթացի և արդյունքների հաշվառման աղյուսակներ):

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ ***Մ.Ճաղարյան***

ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի
2023 թ. հոկտեմբերի ____ -ի
թիվ _____ հրամանի

ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչի հաշվետվություն

Ստորաբաժանում՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին (ՄԿՈԱԲ)

Բաժնի վարիչ՝ Մ. Ճաղարյան

Ժամանակահատված՝ 2022-23 ուստար, 2023թ. սեպտեմբեր-դեկտեմբեր

Ներկայացման ամսաթիվ՝ 30.11.2023թ.

Երևան 2023

Մաս 1. Ստորաբաժանման գործողությունների պլանի կատարողական

ՄԿՈԱ բաժնի գործողությունների պլանը մշակվել է ըստ ԵՊՀ ԻՄ 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված մասնաճյուղի 2022թ.-ի ապրիլ-դեկտեմբեր, 2023թ.-ի հունվար-օգոստոս և 2023թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր գործողությունների պլանների: Բաժնի գործողությունների պլանը ներառում է այն հիմնական գործողությունների համախումբը, որոնք համահունչ են բաժնի գործառույթներին և ուղղորդված են նաև բաժնի գործունեության ընդլայնմանն ու ակտիվության բարձրացմանը: Այն ներառում է գործողություններ, որոնք ուղղորդված են ապահովելու մասնաճյուղի 3 նպատակների իրականացումը որակի ներքին ապահովման համակարգի գործիքակազմի կիրառման, գործընթացների իրականացման ՊԻԳԲ շրջափուլի ապահովման, շահակիցներինհետ համագործակցության և հետադարձ կապի կիրառման միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածի գործողությունների պլանով բաժնին վերագրվել են կրթական գործընթացների որակի և արդյունավետության բարելավմանը և համակարգմանն ուղղված փաստաթղթերի (կարգեր, քաղաքականություններ, ուղեցույցներ, մեխանիզմներ, ձևաչափեր և այլն) մշակումներ, ներքին և արտաքին շահակիցների հետ առնչվող գործընթացների վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում և արդյունքների վերաբերյալ վերլուծությունների և զեկույցների պատրաստում, ստորաբաժանումներին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում և այլն:

Հաշվետու ուստարում ՄԿՈԱ բաժնի աշխատանքային պլանը ներառել է 24 գործողություններ, և դրանց իրականացման շրջանակներում պետք է գրանցվեին շուրջ 5 տասնյակ արդյունքներ: Բաժինը հաշվետու ժամանակահատվածում կարողացել է ամբողջությամբ, որոշ դեպքերում մասնակի իրականացնել պլանավորված աշխատանքների մոտ 60%-ը: Մշակել է 6 կարգ, որից 2-ը հաստատվել են ԳԽ-ում, 1 ուղեցույց, կատարել է բավականաչափ ուսումնասիրություններ և կազմել հաշվետվություններ և զեկույցներ (արդյունքները ներկայացված են Հավելվածում):

ՄԿՈԱ բաժինը 3 նպատակների շրջանակներում.

- տարբեր մեխանիզմներով **<u>իրականացրել է</u>** ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատում (**Կ2.4**), ուսումնասիրել է նրանց խնդիրները, դրանց արդյունքների հիման վրա կազմել է խնդիրների փաթեթներ, որոնք պարբերաբար ներկայացվել և քննարկվել են տնօրենության նիստերում, դրանց հիման վրա պատասխանատու ստորաբաժանումները կազմել են լուծումների ծրագրեր, որոնց իրականացման և արդյունքների վերաբերյալ բաժինը նույնպես կազմել է հաշվետու զեկույցներ և ներկայացրել տնօրենության նիստերում (2022թ. հոկտեմբեր՝ խնդիրների փաթեթ,

13.04.2023թ.՝ խնդիրների լուծումների վերաբերյալ զեկույց, 15.07.2023թ.՝ շրջանավարտների խնդիրների վերբերյալ զեկույց, 27.10.2023թ.՝ նոր խնդիրների փաթեթ): Մշակել և մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացրել «ԵՊՀ ԻՄ շահակիցների կարիքների վերհանման և գնահատման կարգ»-ը, **կարգը ներկայացվել է ԳԽ-ում հաստատման**,

- Իրականացրել է աշխատաշուկայի վերլուծություն (**Կ2.5**)՝ ուսանողներին ուղղորդելու և աշխատաշուկայում կողմնորոշվելու համար, բաժինն իրականացրել է աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն, կազմել և հրապարակել է 2022թ. -ի դրությամբ Տավուշի մարզի աշխատաշուկայում իրավիճակը, ներկայացրել է Հայաստանում, Ռուսաստանում և աշխարհում ամենապահանջված մասնագիտությունների ցանկը, վերլուծել և հրապարակել է ընդհանուր իրավիճակը: Մշակել է աշխատաշուկայի պահանջարկի գնահատման մեխանիզմներ, այս փաստաթուղթը խմբագրման փուլում է:

- Դասալսումների արդյունավետությունը բարձրացնելու և դասախոսների մասնագիտական աճին աջակցելու և խրախուսելու մեխանիզմները բարելավելու համար բաժինը վերանայել է դասալսումների անցկացման կարգը (**Կ4.7**), դասալսման արդյունքների գնահատման հարցաշարը և վերլուծության ձևաչափը (հաստատվել **են ԳԽ, 29.04.2023թ.նիստում**): Կարգը կիրառվում է, ամբիոններում դասալսումներն իրականացվում են վերանայված կարգին համապատասխան: 2023թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուսումնասիրել է ամբիոններում դասալսման նոր հարցաշարի և վերլուծության նոր ձևաչափի կիրառման արդյունքները և արդյունքների հիման վրա կպարզի դրանց արդյունավետությունը:

- Մշակել է մասնաճյուղում գործող հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության բարելավման և նոր մեխանիզմների ներդրման առաջարկներ (**Կ6.2**): Փաստաթուղթը խմբագրման փուլում է, ներկայացվել է ԳԽ-ին կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովի (ՈԿՄՀ-ի) քննարկմանը:

- Աուդիտի գործընթացների հստակ կազմակերպման, ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման, նրանց գործունեությանն աջակցելու և կանոնակարգելու համար բոլոր ստորաբաժանումների համար կազմել է ահրաժեշտ փաստաթղթերի ցանկեր (**Կ6.3**),

- Բաժինն իրականացրել է այլ բուհերում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի պահանջների ուսումնասիրություն և բենչմարքինգ, վերլուծել է բենչմարքինգի արդյունքները և մշակել է մասնաճյուղում ավարտական աշխատանքների գիտական մակարդակի բարձրացման առաջարկներ (**Գ1.1**), փաստաթուղթը ներկայացվել է ԳԽ-ին կից ՈԿՄՀ քննարկման:

<u>Չի մշակվել</u> ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձրացմանը միտված քաղաքականություն:

- Բաժինը ուսումնասիրել է այլ բուհերում լրացուցիչ կրթական ծրագրերի իրկանացման մոտեցումները, շահակիցների առաջարկները և պահանջները լրացուցիչ

կրթական ծրագրերի կազմակերպման համար և մշակել է «ԵՊՀ ԻՄ-ում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման կարգ» (**Հ1.1, Հ1.2, Հ3.1**), որը հաստատվել է **ԳԽ-ում (29.04.2023թ.)**: Մշակվել է նաև շահակիցներին լրացուցիչ կրթական ծառայության մատուցման պայմանագրի ձևաչափը: Ըստ կարգի առայժմ լրացուցիչ կրթական ծրագրեր <u>չեն իրականացվել</u>, հետևաբար <u>չեն մշակվել</u> նաև լրացուցիչ կրթության արդյունավետության և որակի գնահատման ցուցիչներ:

- Տարածաշրջանի ձեռնարկությունների հետ համագործակցության իրականացման և ակտիվացման, ուսանողների մասնագիտական և բիզնես կարողությունների զարգացմանն աջակցելու և այդ գործընթացները կանոնակարգելու համար բաժինը մշակել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և պետական ու ոչ պետական կառույցների ու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման կարգ (**Հ2.1**): Կարգը քննարկվել է ԳԽ-ին կից ՈԿՄՀ-ում և ներկայացվել է ԳԽ-ում հաստատման:

- Կատարել է մասնաճյուղի վերջին 5 տարիների (2018-2022) շրջանավարտների զբաղվածության վերլուծություն (**Հ2.2**), կազմել է համապատասխան զեկույց և հրապարակել է: Բաժինը վարում է շրջանավարտների բազա, որի տվյալները պարբերաբար թարմացվում են և որի միջոցով աջակցում է մարզի գործատուներին համապատասխան որակավորում ունեցող կադրերի փնտրման գործընթացում: <u>Չի ստեղծվել</u> «Շրջանավարտների միություն»:

- Բաժինն ուսումնասիրել է լրացուցիչ պրակտիկաների իրականացման այլ բուհերի փորձը, մարզում դրանց իրականացման հնարավորությունները և մշակել է «ԵՊՀ ԻՄ-ում լրացուցիչ պրակտիկաների իրականացման աշխատակարգ» (**Հ2.4**): Մշակել է նաև «ԵՊՀ ԻՄ-ում մենթորության իրականացման կարգ» և «ԵՊՀ ԻՄ-ում մենթորության կազմակերպման ուղեցույց»: Երեք փաստաթղթերը ներկայացվել են ԳԽ-ին կից ՈԿՄՀ քննարկման:

- Բաժինը մշակել է ոչ ֆորմալ կրթության իրականացման գործընթացում նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառման համար խրախուսման մեխանիզմներ (**Հ3.3**), փաստաթուղթը ներկայացվել է ԳԽ-ին կից ՈԿՄՀ քննարկման:

- Մշակվել է տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ փոխհամագործակցության ծրագրերի իրականացման պլան (**Հ4.2**), այն վերանայման և խմբագրման փուլում է:

Բաժինը մի շարք գործողությունների շրջանակներում առայժմ <u>ոչ մի արդյունք ձեռք չի բերել</u>, մասնավորապես.

- <u>Չի ստեղծվել</u> էքսպոների և աշխատանքի տոնավաճառների կազմակերպման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, բաժինը պետք է աջակցեր ֆակուլտետներին էքսպոների և աշխատանքի տոնավաճառների կազմակերպման գործընթացի պլանավորմանը, այս գործընթացները առայժմ <u>չեն իրականացվել</u> (**Հ2.3**),

- <u>Չի մշակել</u> հանրությանը Մասնաճյուղի հաշվետվողականությունն ապահովող համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմներ, և չի իրականացվել

հաշվետվողականությունից հանրության բավարարվածության ուսումնասիրություն (**Հ4.3**),

- Չի կատարվել հասարակության հետ Մասնաճյուղի հետադարձ կապի գործող մեխանիզմների ուսումնասիրություն և դրանց արդյունավետության գնահատում, հետևաբար նաև չեն ներկայացվել դրանց բարելավման առաջարկներ (**Հ4.4**),
- Չի մշակվել Մասնաճյուղի միջազգայնացման քաղաքականություն (**Հ5.1**),
- Բաժինը պետք է աջակցեր PR և մարքեթինգային հաղորդակցության ռազմավարության մշակմանը, պատասխանատու ստորաբաժանումների կողմից առաջարկներ չեն եղել, բաժինը ինքը նախաձեռնություն չի ցուցաբերել (**Հ5.4**)։
- Բաժինը չի իրականացրել ԵՊՀ ԻՄ-ի միջազգայնացման բենչմարքինգի հետ կապված համապատասխան գործընթացներ (**Հ5.5**)։

Հարց 1. Բաժինն իրեն ամրագրված գործողությունների մի մասն իրականացրել է։ Գործողությունների պլանի իրականացման շրջանակներում բաժինը ձեռք է բերել հետևյալ արդյունքները.

- Ըստ մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման նոր ռամավարական ծրագրի պահանջների վերանայել է Մասնաճյուղի գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը՝ համալրելով նոր ցուցանիշներով, իրականացրել է 2017-2022թթ. և 2018-2023թթ. ԳԱՑ-երի համալրում, վերլուծություն։ ԳԱՑ 2017-2022թթ. 2022թ.-ի դեկտեմբերին ներկայացվել է ԳԽ-ում և հրապարակվել է (տեղադրվել է Մասնաճյուղի պաշտոնական կայքում)։ ԳԱՑ 2018-2023թթ. պատրաստ է ԳԽ-ում ներկայացման։
- Մշակել է ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման ընթացակարգ, որը քննարկման փուլում է։
- Պարբերաբար տարբեր մեխանիզմներով իրականացրել է ներքին և արտաքին շահակիցների խնդիրների և կարիքների ուսումնասիրություններ, վերլուծություններ և համապատասխան զեկույցների կազմում,
- Մշակել է մի շարք փաստաթղթեր (ընթացակարգեր, կարգեր, աշխատակարգեր, մեխանիզմներ, ուղեցույցներ և այլն), որոնցից մի մասն արդեն քննարկվել և հաստատվել են Մասնաճյուղի Գիտական խորհրդի նիստերում, մի մասը պատրաստ են հաստատման, որոշ փաստաթղթեր խմբագրման փուլում են,
- Մասնակցել է մասնաճյուղի գործունեության կանոնակարգման գործընթացի շրջանակներում բազմաթիվ փաստաթղթերի մշակման և խմբագրման աշխատանքներին (**Կ5.5**),
- Բոլոր ստորաբաժանումներում իրականացրել է անհրաժեշտ խորհրդատվություն՝ աջակցելով նրանց գործունեության պլանավորմանը և բարելավմանը, կատարողականի վերլուծությանը։ Մասնավորապես, ամբիոններում հետևողական է դասընթացների փաթեթների առկայությանը և անհրաժեշտության դեպքում իրականացնում է դրանց կազմելու վերաբերյալ խորհրդատվություն։
- Համակարգել է ստորաբաժանումների գործողությունների պլանների և աշխատանքային պլանների մշակման և հաստատման գործընթացները։

- Համակարգել է ստորաբաժանումների հաշվետվությունների կազմակերպման աշխատանքները, կատարել է մասնաճյուղի 2021-22 ուստարվա գործունեության վերլուծություն և կազմել է հաշվետու զեկույց։ Կատարել է մասնաճյուղի 2022թ.-ի ապրիլից-դեկտեմբեր ռազմավարական պլանի կատարողականի վերլուծություն, կազմել է զեկույց՝ ներկայացնելով ձեռքբերումները և բացթողումները։

Հարց 2. Բաժինն առաջնորդվել է հստակ մշակված գործողությունների պլանով, որում ներկայացված են յուրաքանչյուր գործողության իրականացումից ակնկալիքները, հաջողության ցուցիչները և թիրախները։ Դրանք ուղղորդել են նպատակաուղղված գործունեության, ինչը բաժինն իրականացրել է մշակված աշխատանքային պլանի միջոցով՝ անհրաժեշտ ժամկետներում։

Հարց 3. Բաժնի գործունեության հիմնական նպատակն էր վեր հանել կրթության կազմակերպման և իրականացման գործընթացում առկա տարատեսակ խնդիրները, առաջարկել դրանց լուծման, կոնկրետ գործընթացների բարելավման և արդյունավետության բարձրացման առաջարկներ։ Եվ քանի որ խնդիրներն ու կարիքները պարբերաբար վեր են հանվում, ապա անհրաժեշտ է հետևողականորեն գնալ բարձրաձայնված խնդիրների լուծման տարբերակների առաջարկմանը, անհրաժեշտ մեխանիզմների մշակմանը և ներդրմանը։

Հարց 4. Բաժնի գործողությունների պլանում կան գործողություններ, որոնց շուրջ բաժինը չի կարողացել արդյունավետ աշխատանք տանել և հասնել անհրաժեշտ ակնկալիքներին, դրանք պայմանավորված են դրանց իրականացման հետ կապված բարդություններով, սակայն ժամանակային առումով (մինչև 2026թ. դեկտեմբեր) հույս ունենք, որ բաժինը կկարողանա հաղթահարել իր առջև դրված խնդիրները։

Հարց 5,6. Առկա դժվարությունների և բացթողումների հաղթահարման համար անհրաժեշտ է հետևողականորեն առաջնորդվել մշակված գործողությունների պլաններով, ճիշտ կազմակերպել բաժնի գործունեությունը, վերանայել աշխատանքային պլանը՝ կատարելով անհրաժեշտ գործողությունների հստակեցում և վերաբաշխում աշխատակիցների միջև, նաև տրամադրել առավելագույն մասնագիտական աջակցություն աշխատակիցներին իրենց գործառույթների իրականացման շրջանակներում։

Բաժնի գորընթացները արդյունավետ իրականացնելու համար առաջարկում եմ աշխատակիցներին ուղարկել մասնագիտական վերապատրաստման, նաև հաշվի առնելով բաժնի գործառույթների մեծ շրջանակը, բնույթը և գործողությունների ծավալը ավելացնել նրանց հաստիքը, նաև բաժնի աշխատանքներում ներգրավել սոցիոլոգ։

Հաջորդիվ (կամ հետամուտ) քայլեր

Հաշվի առնելով բաժնի գործունեության ընթացքում ձեռք բերված արդյունքները գտնում եմ, որ դրանց բարելավման համար կարևոր են հետևյալ մոտեցումները.

- բարձրացնել ուսանողների մոտիվացիան,
- ճիշտ կիրառել բազմագործոն գնահատման համակարգի բաղադրիչները,
- հստակեցնել գնահատաման չափանիշները,
- ուշադրություն դարձնել ուսանողների ինքնուրույն աշխատանքների բովանդակային կողմին, որ դրանք հնարավորություն տան ուսանողին զարգացնել քննադատական մտածողությունը, ունենան հետազոտելու և եզրակացություններ կատարելու տարրեր, ներառեն նախագծեր, լիեն նաև խմբային աշխատանքներ՝ ուսանողների մոտ թիմային աշխատելու կարողությունները զարգացնելու համար,
- ճիշտ օգտագործել յուրաքանչյուր դասընթացի ինքնուրույն աշխատանքին հատկացված աշխատածավալը, մշակել այդ ժամանակահատվածի հաշվարկման նորմեր ուսանողների և դասախոսների բեռնվածությունների հստակեցման համար,
- ակտիվացնել աշխատանքը ուսանողների հետ՝ կազմակերպելով հանդիպում-քննարկումներ, այնպես, որ ուսանողները ցանկություն ունենան ներգրավվելու և մասնակցելու,
- հնարավորինս ուշադրություն դարձնել շահակիցների խնդիրներին, դրանց լուծելուց հետո արդյունքների մասին իրազեկել նրանց, առանձնահատուկ այն խնդիրների դեպքում, որոնց լուծումները շահակիցների համար միգուցե ակնհայտ տեսանելի չեն,
- կատարել նախկին և ներկա խնդիրների համեմատական վերլուծություն՝ առաջընթացը գնահատելու և պարբերաբար կրկնվող խնդիրները առանձնացնելու համար,
- ակտիվացնել արտաքին շահակիցների հետ համագործակցությունը, մասնավորապես ուսումնասիրել լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման պահանջարկը և անպայման ներդնել մի քանիսը,
- բարելավել հաշվետվողականության համակարգը, մշակել դրանց կանոնակարգման մեխանիզմներ, ժամանակացույցեր և այլն։

Կարևոր է նաև ձեռնարկությունների հետ համագործակցությունը, որի ընթացքում պետք է արդյունավետ օգտագործել գործատուների ռեսուրսները ուսանողների մասնագիտական կարողությունները զարգացնելու, նաև լրացուցիչ պրակտիկաներ (ինտեշիփեր) կազմակերպելու համար։